

Մարքսը հենվում էր կապիտալիզմի օրով նվաճված մարդկային գիտելիքների հաստատուն պատվանդանին. ուսումնասիրելով մարդկային հասարակության զարգացման օրենքները, Մարքսը ըմբռնեց կապիտալիզմից դեպի կոմունիզմը տանող զարգացման անխուսափելիությունը և, որ գլխավորն է, նա այդ ապացուցեց այդ կապիտալիստական հասարակության միայն ամենաճշգրիտ, ամենամանրակրկիտ, ամենախոր ուսումնասիրության հիման վրա, այն ամենի լրիվ յուրացման օգնությամբ, ինչ որ տվել էր նախորդ գիտությունը: Այն ամենը, ինչ որ ստեղծել էր մարդկային միտքը, նա վերամշակեց, քննադատության ենթարկեց, ստուգելով բանվորական շարժումով, և հանգեց այն եզրակացություններին, որոնց չէին կարողանում հանգել բուրժուական շրջանակներով սահմանափակված կամ բուրժուական նախապաշարմունքներով կաշկանդված մարդիկ:

Վ. Ի. ԼԵՆԻՆ